

Ավետիս Ահարոնյանի 1920թ. մարտի 19-ի և 23-ի
նամակները Լոնդոնից

1920թ. փետրվարի 12-ից անպրիլի 10-ը Լոնդոնում տեղի է ունեցել դաշնակիցների վարչապետների և արտաքին գործոց նախարարների կոնֆերանսը, որին մասնակցել են Անգլիայի վարչապետ Դ.Լլոյդ Ջորջը, նախարար Ջ.Քերզոնը, Ֆրանսիայի վարչապետ Ա.Միլլերանը, ԱԳՆ-ի գլխավոր քարտուղար Ֆ.Բերթելոն և դեսպան Ժ.Կամբոնը, Իտալիայի վարչապետ Ֆ.Նիտտին, նախարար Վ.Սկյալոջան և դեսպան Գ.Իմպերիալին, ճապոնիայի դեսպան Ս.Շինդան: Կոնֆերանսը անցել է Թուրքիայի հետ պայմանագրի ձևավորմանը և փետրվարի 16-ից սկսած մանրամասն քննարկել Հայաստան նորաստեղծ պետության ապագան ու հնարավոր սահմանները: Վերջին հարցը մշակելու համար, փետրվարի 17-ին ստեղծվեց հայկական սահմանների հանձնաժողով, որում ընդգրկվել են ֆրանսիացիներ Ա.Կամմերերը՝ որպես նախագահ, և Է. դը Ֆլերիոն, այնուհետև գնդապետ Պ.-Օ.Շարդինյին, Անգլիայից Ռ.Վանսիտարտը և փոխ-գնդապետ Ու.Գրիբբոնը, Իտալիայից Կ.Գալլին ու գնդապետ Կաստոլդին (ներկա է նաև Նոգարայի անունը), ճապոնիայից Ի. Յոշիդան և 2-րդ նավակարգի կապիտան Կ.Աննոն: Փետրվարի 21-ին, 26-ին ու մարտի 16-ին այստեղ հրավիրել են Հայաստանի Հանրապետության ու Ազգային պատվիրակությունների ղեկավարներին՝ իրենց կարծիքն արտահայտելու համար: Առաջին հանդիպմանը մասնակցել են Ա. Ահարոնյանը, Պողոս Նուբարն ու Գ.Ղորղանյանը: Ամսի 26-ից ի վեր Գ. Ղորղանյանին փոխարինել է Կ.Պոլսի հայոց պատրիարք Ջավեն Տերեղիայանը¹:

Փետրվարի 27-ին հանձնաժողովը ներկայացրել է իր առաջին զեկուցումը, պահանջելով 15-20-հազարանոց բանակի երեք տարվա օժանդակություն, ու նույն իսկ օրը կոնֆերանսում որոշվել է, որ հայկական կողմը ստորագրելու է ապագա պայմագիրը: Նոր երկրի ռազմա-տնտեսական հովանավորությունը հանձնում են Ազգերի լիգային: Իրենց հերթին, մարտի 3-ին Ա. Ահարոնյանն ու Պողոս Նուբարը ներկայացրել են հուշագիրը հայերի 19,1 միլիարդ ֆրանկ կազմող նյութական կորուստների ու նրանց փոխհատուցման անհրաժեշտության մասին: Ու թեև մարտի 4-ին կոնֆերանսը աջակցել է նրանց պահանջին, ֆինանսական հանձնաժողովը իր մարտի 3-ի և 27-ի զեկուցումներում պնդել է, որ պայմանագիրը

¹ Ավելի մանրամասն տես. Ահարոնյան Ա., Սարդարապատից մինչեւ Սեւր եվ Լոզան: Քաղաքական օրագիր 1919-1927: Եր., ԵՊՀ, 2001, էջ 54-86; Ջաւեն արքեպիսկոպոս (Տեր Եղիայեան): Պատրիարքական յուշերս: Վաւերագիրներ եւ վկայութիւններ: Գահիրե, Նոր աստղ, 1947, էջ 330-340, 344-348; Marashlian L., The London and San Remo Conferences and the Armenian Settlement; the Belated Decisions, February-April, 1920. "Armenian Review," Boston, 1977, vol.30, Autumn, p.230-235, 240-250; Махмуриян Г.Г., Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг. Бремя белого человека. Ер., Лусакн, 2002, с. 186-201; Զ. Յ., Дипломатия Республики Армения в январе-апреле 1920 г., «Պատմա-քաղաքական հանդես», Եր., 2007, № 2, էջ 88-95; Ованнисян Р., Международные отношения Республики Армения 1918-1920 гг. Ер., Тигран Мец, 2007, с.425-484; նույնը անգլերեն. Hovannisian R., The Republic of Armenia, vol.III From London to Sèvres, February - August 1920. Berkeley & Los Angeles, University of California Press, 1996, p.20-70:

փոխհատուցման խնդիր չպետք է պարունակի:

Դեռևս կոնֆերանսի բացման նախօրյակին, դաշնակիցների աշխատանքին հակազդելու համար, հունվարի 21-ից մինչև փետրվարի 11-ը Մուստաֆա Քեմալի ազգայնական հրոսակները հարձակվել են Մարաշի վրա, հրկիզել քաղաքն, կոտորել բնակիչներին, փախուստի մատնել ֆրանսիացիների ստորաբաժանումներին ու մազապուրծ հայերին²: Այդ հարձակման ու եռօրյա փախուստի-109 ստի զոհ է դարձել 18.000 մարդ¹: Մարաշի կոտորածի վերջի օրերին և դիվանագետների գործունեությանը զուգահեռ, փետրվարի 9-ից մինչև ապրիլի 11-ը նույն հարձակումը ուղղվել է Ուրֆայի դեմ, ապրիլի 1-ին սկսվել է Այնթապի ոգորումը²: Որպես արդյունք՝ դաշնակիցները հրաժարվել են Կիլիկիայի սահմաններում նոր հայկական պետության ստեղծելու մտադրությունից, թեև նրանք օգտագործել են այդ առիթը մարտի 16-ին Կ.Պոլիսն գրավելու համար:

Այդ նույն օրը՝ մարտի 16-ին, Գ.Ղորղանյանը հայտագիր է ներկայացրել հայկական «Նահանգների ռազմագրավման մասին»: Նա հայտնել է դաշնակիցներին, որ ՀՀ բանակը ի վիճակի չէր դուրս մղել թուրքական զորքերն Արևմտյան Հայաստանի շրջաններից: Լոնդոնում արդեն բացվել էր Ազգերի լիգայի թեման, ու կոնֆերանսի պահանջով Ա.Ահարոնյանն ու Պողոս Նուբարը 1920թ. մարտի 20-ին հանձնել են այդ կազմակերպության հետ համագործակցելու մասին հուշագիրը:

Ռազմական հանցագործությունների դատապարտման Ժ.Կամբոնի գլխավորած կոմիտեն մարտի 22-ին ներկայացրեց իր որոշումը՝ Օսմանյան կայսրության ողջ տարածքում հայերի կոտորածն իրականացրած թուրքական կառավարությունը ենթակա է դաշնակիցների ռազմական տրիբունալին: Եվ, ի վերջո, մարտի 25-ին, հիմք ունենալով սահմանային հանձնաժողովի ամսի 24-ի երկրորդ զեկուցումը և հետևելով Սայքս-Պիկոյի հիմնադրույթները, կոնֆերանսը Հայաստանին է վերապահել Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Տրապիզոնի նահանգների մեծ մասն ու Բաթումի մարզի վրայով ազատ տարանցման հնարավորությունը:

Ներկայացվող փաստաթղթերը ՀՀ պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանի զեկուցումներն են կոնֆերանսի ընթացքի մասին, հասցեա-

² Ականատեսների վկայություններ. Brnmond E., La Cilicie en 1919-1920. Paris, Imprimerie Nationale, 1921; Materne Muré R.P., Le massacre de Marache (février 1920). Un épisode de la tragédie arménienne. Bruxelles, Flambeau, 1921 & Cambridge, SAS, 1987; Thibault C., Historique du 412^e régiment d'infanterie. Pt.2 Opérations en Asie Mineur. Paris, Charles-109 Lavauzelle, 1923; Normand R., Colonnes dans le Levant. Paris, Charles-Lavauzelle, 1924; du Véou P., La passion de la Cilicie 1919-1922. 2nde ed. Paris, Paul Geuthner, 1954; Kerr S.E., The Lions of Marash. Personal Experience with American Near East Relief, 1919-1922. Albany, State University of New York Press, 1973; նաև. Սահակյան Ռ.Գ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921թթ.: Եր., ՀՍՍՀ ԳԱ, 1970, էջ 136-141, 148-153, 159-162:

¹ Նույն թիվը 8.03.1920-ին Պառլամենտի Համայնքների պալատում ելքերել է Թ.Պ.Օ'Քոննորը, Դ.Լլոյդ Ջորջը այն իջեցրել է 15.000-ի՝ The Parliamentary Debates, Official Report, House of Commons, 5th series, vol.126, col.894: Հայկական հարց, Հանրագիտարան, խմբ.Կ. Խուղավերդյան, Եր., Հայկական հանրագիտարան, 1996, էջ 185-ում հիշատակվում են 11.000 զոհեր, առանց փախուստի ժամանակ կրած 3.500 հոգու կորուստի:

² Mandelstam A.-N., La Société des Nations et les Puissances devant le Problème Arménien. 2ème ed., Liban, Hamaskaine, 1970, p.396; Kerr S., Op.cit., p.193, 195, 214:

գրած հանրապետության վարչապետ Ա.Խատիսյանին: Վավերագրերում տեղ են գտել քառակուսի փակագծերում ներառված դարձվածքներ: Սրանք այն բառերն են, որոնք վստահաբար վերականգնվում են, ելնելով տվյալ ուղերձի բովանդակությունից ու Ա.Ահարոնյանի այլ նամակներում ընդունված արտահայտություններից: Փաստաթղթերում մեր կողմից կատարվել են կրճատումներ, որոնք չեն աճղատում դրանց բովանդակությունը:

№ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՐ Ա. ԱՐԱՐՈՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ Ա. ԽԱՏԻՍՅԱՆԻՆ՝ ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19 մարտի 1920թ., Լոնդոն

Այս ամսի 9-ին Անգլիայի... [Ֆորին օֆիսի] միջոցով Ձեզ շտապով գրեցի քանի մի տեղեկություններ մեր հարցի վիճակի մասին: Այժմ ուղարկում եմ Ձեզ հատուկ թղթատար բժ.[Տ.]Չալյանին¹ և պիտի փորձեմ լիակատար պատկեր տալ մեր աշխատանքների և ձեռք բերած արդյունքի... Լոնդոնից ձեզ հեռագրել եմ փետրվար 21-ին երկու անգամ, այնուհետև փետրվար 23-ին, մարտի 8-ին և 12-ին: //-110 Մեկից բացի, որ դրկել եմ պ.Ֆ.Թախթաճյանին² Ձեզ հասցնելու համար, մնացած բոլոր հեռագրերը հանձնել եմ հունական տեղիս դեսպանին, որ շատ սիրահոժար ձևով ընդունել է և Ձեզ ուղարկել շիֆրով...

Ինչպես գիտեք Հռոմից Լոնդոն եկա փետրվարի 17-ին, հետևապես ուղիղ մի ամիս է, ինչ այստեղ եմ: Այս անգամ անգլիական կառավարության ցանկությամբ Լոնդոնում գումարվեց Խաղաղության համաժողովը արևելյան կնճիռը և առհասարակ առկախ մնացած խնդիրները կարգադրելու համար: Առաջին հերթին դրվեց և մեր հարցը: Այստեղ է, սկզբից ի վեր, բնականապես, Պողոս փաշան, երկու շաբաթ առաջ հասավ և Կ.Պոլսի հայոց պատրիարք ս. Ջավեն արքեպիսկոպոսը: Իմ քարտուղարներից բացի, ինձ հետ են գեներալ Գ.Ղորղանյան³, Օհաննես խան Մասեհյան⁴: Փարիզում թողեցի մեր ընդհանուր քարտուղար պ.Սիմոն Հակոբյանին⁵, որ ստանում է ընթացիկ գրությունները և ինձ հաղորդում կարգադրության համար, իսկ մեր տնտեսական ու ֆինանսական խնդիրները Փարիզում հանձնել եմ պ.պ.Մ.Աճենյանին⁶ և Ա.Խանենյանին⁷: Մի շաբաթ ի վեր Մ.Աճենյան նույնպես Լոնդոն եկավ և որ մեծապես նպաստեց ինձ մեր բոլոր խորհրդակցությունների ժամանակ:

Խաղաղության համագումարը. - Այս անգամ այսպես կոչված... [Կոնսեյ Սյուբրեմի⁸] անդամներն են Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի առաջին նախարարները, Դ.Լլոյդ Ջորջ, Ա.Միլլերան և Ֆ.Նիտտի: Երկու շաբաթ առաջ Ա.Միլլերան ու Ֆ.Նիտտի մեկնեցին, համագումարը շարունակում է սակայն իր նիստերը արտաքին գործոց նախարարների մասնակցությամբ, այսպիսով այդ ժամանակից ի վեր... [Կոնսեյ Սյուբրեմի] անդամներն են Լորդ Ջ.Բերգոն, Ֆ.Բերթելո, Վ.Սկյալոջա նախագահությամբ Դ. Լլոյդ Ջորջի... Հայաստանի սահմանները որոշող միջազգային հանձնա-

ժողովը կազմված է Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի երկուսական ներկայացուցիչներից: Ահա այս հանձնաժողովն էր, որ մինչև այժմ երեք անգամ մեզ հրավիրել է նիստերին խորհրդակցության ու բացատրությունների համար...

Պետությունների դիրքը մեր հարցի հանդեպ. - Բարեբախտություն եղավ մեզ համար Խաղաղության համագումարի Լոնդոն փոխադրվելը: Սկզբից ևեթ այստեղ մեզ համար շատ նպաստավոր մթնոլորտ գտանք: Անգլիական հասարակաց կարծիքը բացորոշ կերպով հակաթուրք, Չայաստանի շահերի պաշտպան հանդիսացավ: Բոլոր թերթերը... գլուխ ունենալով... [«Թայմս»ը - ԳՄ] շատ բուռն ձևով են գրում թուրքերի դեմ և միշտ հոգուտ հայերի ու Չայաստանի... ղրկեցի ձեզ վերջին մի քանի շաբաթների թերթի կտորներ, որոնք ձեզ լիուլի ծանոթություն կտան անգլիական հասարակաց կարծիքի և առհասարակ այս երկրի քաղաքական տրամադրությունների մասին:

Դրա փոխարեն ֆրանսիական հասարակաց կարծիքն ու մամուլը վճռապես ձեռք առավ թուրքերի պաշտպանությունը բուռն եռանդով... Այսպիսով Լա Մանչի երկու կողմերում, նախկին ընդհանուր լեզուն ու տրամադրությունն դարձան բացարձակ հակամարտություն երկու ժողովուրդների մեջ: Բնականապես երկու կառավարությունների քաղաքականություն ևս համապատասխան ընթացք ստացավ: Մինչդեռ Անգլիան հետապնդում է օրինակելի դատի տալ թուրքերին և լուրջ երաշխիքներ ձեռք առնել Թուրքիայի դեմ, զսպելու համար նրա բարբարոս և արյունալի*, Ֆրանսիան նրա հակառակ աշխատում է որչափ կարելի է սակավ զրկանքով ազատել Թուրքիան այս կրիզիսից և նրան ապահովել հետագայում կարևոր հողամասեր և քաղաքական այնպիսի վիճակ, որպեսզի բաժան բաժան լինելուց ազատվի... Կ.Պոլսի խնդրում Իտալիան հարեց Ֆրանսիայի հայեցակետին, մինչդեռ Չայաստանի վերաբերյալ խնդիրներում նրա համակրությունն ու աջակցությունը մեզ հետ եղավ, Անգլիայի քաղաքականության համաձայն: Ճապոնիան շատ գործոն դեր չունի, բայց բոլոր առիթներից, ինչպես հավաստացնում են մեզ, ավելի շուտ Անգլիայի կողմնակից է: Ամերիկան պաշտոնապես չի մասնակցում: // -111

Անգլո-ֆրանսիական հակամարտություն. Այս հակամարտությունը որ մինչև այժմ խուլ էր և հազիվ նկատվում էր երկու երկրների մամուլի... պարտամ արտահայտություններով, վերջերս ավելի բուռն բնույթ ստացավ ու դարձավ բացահայտ թուրքական խնդրի ու մասնավորապես Կ.Պոլսի խնդրի մեջ...

Այսօր շատ ու շատ են մեծանում ու խորիմաստ անգլիացիներ, ինչպես մեր անզուգական բարեկամներ լորդ Ջեյմս Բրայս⁹ և լորդ Ռոբերտ Սեսիլ¹⁰, Սոլսբերիի որդին, որոնց համար պանթուրանական վտանգը երևայական չէ, այլ իրական և պահանջում են վճռական միջոցներով [հերքել]... հիվանդոտ արտահայտությունները: Անգլիայում հաստատ համոզում են կայացրել, թե քանի Թուրքիան կանգուն է և երիտթուրքերը

* Գոյականը բացակայում է:

Նրա ճակատագրի տերը, Ասիայում խաղաղությունը չկա: Այս մշտական կոշմարից ազատվելու միակ միջոցը համարվում է անգլիական քաղաքական անձանց կարծիքով... Թուրքիան դարձնել Ալժիրի կամ Թունիսի նման մի... անարժեք անվանական պետություն: Այս հետևանքին հասնելու համար անհրաժեշտ է նկատվում Թուրքիայից խլել ոչ միայն այն բոլոր գավառները, որոնք թուրքական չեն - Միջագետքը, Արաբիա, Սիրիա, Պաղեստին, Կիլիկիա և Հայաստան - այլև քշել թուրքերին Կ.Պոլսից¹¹, որ եղել է ոճիրների և դավերի բուն, վերցնել նրանցից նեղուցները: Այդ չէ բոլորը որ նույնիսկ այն զուտ թուրք հողերը, որոնք պիտի մնան թուրքերին կամ սուլթանին, դրվին իրական վերահսկողության տակ, ջնջվի թրքական բանակը և փոխարինվի ժանդարմերիայով, իսպառ վերցվի այսպես կոչված թուրքական նավատորմիղը: Ահա մոտավորապես այն ծրագիրը, որին հետամտում է այսօր անգլիական քաղաքականությունը հակառակ հնդիկ մահմեդականների շատ բուռն բողոքներին: Մուստաֆա Քեմալի և իր բանդաների վայրագություններն ու սպառնալիքները ոչ միայն չթուլացրին անգլիական կառավարությունը, այլ ընդհակառակը ավելի ևս հստակորեն ապացուցին հիշյալ քաղաքական հարցերի իրագործման անհրաժեշտությունը: Կիլիկիայի մեր թշվառ հայության վերջին զարհուրելի ջարդն եկավ էլ ավելի ամրապնդելու այն համոզումը, ...հետևապես ներողամիտ լինելու այլևս տեղիք չկա...

Առհասարակ նկատելի է, որ անգլիական քաղաքականությունն իր բարդ և հեռատես հաշիվների մեջ միշտ նկատի ունի վերածնված ու զորացած Ռուսաստանի կարելիությունը և պիտի ճնշի նրա ապագա ազդեցությունն ու հնայքը Արևելքում... Անգլիայում ամենքը ձգտում են, որ այս պատերազմի հետևանքով նրանց ստանձնած պարտականություններն Արևելքում և Աֆրիկայում այնքան բազմազան ու այնքան ծանր դարձան, որ ռազմական առաջնակարգ կետերի մը կենտրոնների պետք ունին մնալու համար: Կարծում են, որ Բաթումի շուրջ չեզոք պետություն ստեղծելու ձգտումը այդ մտահոգության արդյունք է... Այսօր հայկական պետությունը և նրա հետագա կազմակերպումի ու զորացումի անհրաժեշտությունը այս երկրում այլևս հակառակություններ չունի: Չեմ կարծում սխալված լինեմ, թե հայտարարեմ, որ անգլիական հասարակաց կարծիքն ու կառավարությունը պանթուրանիզմի դեմ ծառայող արգելքներից մեկը համարում են անկախ ու զորավոր Հայաստանը...

Հայտնի է, որ... պատերազմի բոլոր ծանրությունը բաժին ընկավ դարձյալ Ֆրանսիային, արդ Ֆրանսիան կարծում է, թե ինքը իր հանձն առած զոհաբերության համաձայն վարձատրություն չունեցավ: Եվ նա աչքը դարձրեց դեպի Սիրիա ու Կիլիկիա. վերջին հողամասում նա իր առջև գտավ հայերին՝ ամերիկյան աջակցությամբ: Այս երևույթն արդեն առաջին ցրտության պատճառն դարձավ մեր և Ֆրանսիայի մեջ: Ամերիկայի՝ հետ քաշվելով, Ֆրանսիան պահանջեց և Անգլիան ստիպված եղավ զիջել ու դուրս քաշել իր զորքերը Կիլիկիայից, ուր մտան ֆրանսիական ուժերը: Սակայն տնտեսապես քայքայված և ռազմապես հոգնած Ֆրանսիան հնար չունեց անմիջապես նյութական ու զինական մեծ զոհաբերություններ հանձն առնել Կիլիկիա պահելու համար, ուստի նրա

զինվորական ներկայացուցիչները սկսեցին սիրաշահել թուրքերին, որպես ավելի ուժեղ տարր քան հայերը: Արդյունքը մեր աչքի առաջն է քսան հազար հայեր զոհ գնացին այս կարճատև ու անոթալի քաղաքականության, որ պատմությունը երբեք չի ների Ֆրանսիայի // -112 այս օրվա վարիչներին [Ժ.]Կլեմանտոյից սկսյալ մինչև [Ա.]Միլլերանը:

Միանգամ իր անզորության մեջ.- ...Ֆրանսիական կառավարությունը վճռապես ինքրզինքը հայտարարեց թուրքերի հովանավոր և ուրիշ խնդիրներում... Չցանկանալով Կ.Պոլիսը միջազգային դարձնել, Ֆրանսիան իրոք պայքարում էր Անգլիայի դեմ, որովհետև այն կարծիքն էր տիրում, թե միջազգային Կ.Պոլսում դարձյալ... [մանդատերը] կլինի Անգլիան: Ինչ վերաբերում է Թուրքիային թողնելիք մնացած հողերին, Ֆրանսիայում այն կարծիքն է տիրում, թե որքան մեծ լինի այդ հողերը այնքան ավելի լավ Ֆրանսիական շահերի համար: Ահա թե ինչու Ֆրանսիական ներկայացուցիչները այստեղ նույնիսկ Չայաստանի սահմանները գծագրելիս աշխատեցին որքան կարելի է կրճատել մեր հողերը հօգուտ Թուրքիայի...

Մեր հարցը. ...Ասացի արդեն, որ Խաղ[աղության] համագումարը մեր սահմանները որոշելու համար նշանակեց մի միջազգային հանձնաժողով, որ երեք անգամ արդեն մեզ լսել է: Առաջին անգամ փետրվարի 21-ին ներկայացանք փաշան, ես և գեներալ Գ.Ղորղանյանը: Սահմանների մասին մեր գրավոր պահանջը, որ օրինակելի հմտությամբ պատրաստել էր գեներալը՝ կարդաց Պողոս փաշան և այս առթիվ սկսած վեճաբանությունները տարանք ես ու գեներալ Գ.Ղորղանյանը: Ներփակ դրկում եմ մեր ներկայացրած քարտեզը և սահմանների վերաբերյալ մեր պատանջագրի պատճենը: Ինչպես կտեսնեք մենք պահանջել ենք. 1) ազատ ելք դեպի Սև ծով Տիրեբուլու և ճորոխի գետի մեջ ընկնող տարածության վրա, 2) երզնկան որպես անհրաժեշտ մասը կազմող էրզրումի պաշտպանության, 3) Խարբերդը որպես հայաշատ կենտրոն և դրան կից աշխարհագրապես և ստրատեգիկ տեսակետով Դերսիմը, 4) այնուհետև այդ սահմանն անցնում է դեպի Բալու ապա Վանա ծովի հարավային լեռնաշխարհով գնում է միանալով պարսիկ սահմանագծին: Չեզ գուցե տարօրինակ կամ անհասկանալի թվա, որ մենք չենք պնդել որոշ նավահանգստի, թեկուզ Տրապիզոնի վրա և գերադասել ենք այդ որոշումը թողնել Գեր[ագույն] Խորհրդին: Դժբախտությունն այն է, որ այստեղ ևս մենք մեր առջև ունեինք անգլո-ֆրանսիական խուլ մրցակցություն: Անգլիացիք բացարձակապես մեզ հայտնել էին թե Լազիստանը (ուրեմն և Ռիզե ու Ափնա ծոծերը) պիտի միանա Բաթումի շուրջը կազմվելիք չեզոք պետության, հետևապես մեզ առաջարկում էին պնդել Տրապիզոնի վրա: Ֆրանսիացիք լսել չէին ուզում ոչ միայն Տրապիզոնի, այլ առհասարակ ծովի մասին, իսկ հույներն էլ իրենց կողմից (Պոնտոսի¹² ներկայացուցիչներ) հասան և հայտարարեցին, թե ավելի բարվոք կհամարեն մնալ թուրքերի հետ, քան թե Տրապիզոնը զիջել հայերին: Է.Վենիզելուսը¹³, որ անցյալ տարի ինքնաբերաբար Տրապիզոնը խոստանում էր մեզ, այս անգամ ինձ ու փաշային հայտնեց վերջին տեսակցության, թե ինքը ձեռքերը լվանում է այս խնդրից, նկատի առնելով Պոնտոսի հույների հակառակությունը...

Սակայն հանձնաժողովի առաջ մենք բուռն կերպով ծանրացանք ծովային ելքի անհրաժեշտության վրա մեզ համար: Այս խնդրում մասնավորապես ինձ բաժին ընկավ վիճաբանության բռնվել Ֆրանսիայի ներկայացուցիչ Ա.Կամերերի հետ (ծագումով հրեա), որը համեմատում էր մեր պետությունը Շվեյցարիայի հետ և գտնում էր, որ մենք էլ կարող ենք առանց ծովի ապրել: Դժվար չեղավ ապացուցանել այս համեմատության արտուրդը... Բարեբախտաբար, անգլիական, իտալական եւ ճապոնական ներկայացուցիչները չէին բաժանում ֆրանսիական ներկայացուցչի հայեցակետը և կասկածից դուրս էր, որ մենք պիտի վաստակենք դատը:

Խարբերո՞ւն ու Դերսիմը, ինչպես նաև Սեբաստիան, ինչպես գիտեք, գտնվում են ֆրանսիական զոնայի մեջ: Սակայն Ֆրանսիան վերջերս Սեբաստիայից հրաժարվեց ի հաճույս թուրքերի. այս պատճառով մենք հայտարարեցինք, եթե Ֆրանսիան տրամադիր է իր տիրապետության տակ պահել Խարբերո՞ւն ու Դերսիմը, մենք գոհ կմնանք, բայց եթե Սեբաստիայի պես նա հրաժարվելու է այս շրջաններից, մենք պետք է պահանջենք, որ նրանք միանան Հայաստանի հողերին: Այս փոքրիկ վերապահումն արինք չվիրավորելու համար Ֆրանսիայի ինքնասիրությունը ըստ 1916 թվի դաշնագրի¹⁴: //-113

Երկրորդ անգամ մենք հրավիրվեցինք հիշյալ հանձնաժողովի նիստին փետրվարի 26-ին: Այս անգամ փաշայի և ինձ հետ կանչվեց նաև Կ.Պոլսի մեր պատրիարք տ. Ջավեն արքեպիսկոպոսը, որը նոր հասել էր Լոնդոն: Քննության ու վիճաբանության նյութն էր 1) ներգաղթը, այսինքն որքան հայ ազգաբնակչություն պատրաստ է վերադառնալ Հայաստան, 2) ինչ է մեր կարծիքը մեր պետության մեջ բնակվող օտար և ոչ հայ տարրերի հետ մեր ունենալիք հարաբերության մասին: Առաջին խնդրի մասին ես կարդացի մեր պատրաստած զեկույցը (գեներալ [Գ.Ղորղանյանի] մշակած), որից երևում էր թե թրքահայ գաղթականների հետ աշխարհի զանազան կողմերից Հայաստան կերթան մոտ 800 հազար հայեր (այս փաստաթուղթը դրկում են ներփակ): Ինչ վերաբերում է երկրորդ խնդրին, ես բերանացի ընդարձակ զեկույց արի մեր և քրդերի ու եզիդների, մեր ու թաթարների ու թուրքերի, վերջապես լազերի հարաբերության մասին: Այս զեկույցը, ինչպես կարողացանք իմանալ, թողեց ամենաբարեհաջող տպավորություն և մենք ըստ երևույթին կարողացանք համոզել հանձնաժողովի անդամներին 1) որ մեր երկրում այնքան էլ շատ ոչ հայ տարրեր չեն մնա, ինչքան կան այժմ (ապացույց Բալկանները) և 2) մնացածների հետ, մասնավորապես քուրդերի հետ, մենք պիտի կարողանանք տանելի [modus vivendi¹⁵] ստեղծել, իսկ եզիդիները վաղուց հետե մեզ աջակից են և դաշնակից: Այս երկրորդ խորհրդակցությունից մենք դուրս եկանք շատ սրտապանդված և հավատացած մեր լիակատար հաջողությամբ:

Երրորդ անգամ մեզ պանձնաժողովի նիստին հրավիրեցին մարտի 16-ին: Նախագահը մեզ հայտնեց թե Գերագույն խորհուրդը առաջարկել է Ազգերի լիգայի խորհրդին ընդունել Հայաստանի պաշտպանությունը: Ազգերի լիգան... խնդրել է որոշ տեղեկությունները... Մենք 48 ժամ խնդրեցինք պետք եղած զեկույցը պատրաստելու: Պողոս փաշան, ես, Օհաննես խան Մասեհանը և Մ.Աճեմյան պատրաստեցինք այդ փաստա-

թուղթը, որի պատճենը դրկում են ներփակ... Այս փաստաթղթի շուրջը իմ և փաշայի մեջ սկզբունքային անհամաձայնություն կար: Փաշայի ձգտումն էր որչափ կարելի է ավելի զրկել մեզ մեր անկախությունից և դնել մեզ օտար հովանավորների գործնական իշխանության տակ. նրա կարծիքով որչափ օտարի ազդեցությունը մեր պետության, մեր վարչական գործերի, մեր դատական գործերի, մեր կառավարության գլխին ավելի լինի, այնքան ավելի լավ, քանի որ մենք անընդունակ ենք մեզ կառավարել: Ես այս բոլորի մեջ նկատելով պարզ ակնարկ այժմյան կառավարության հասցեին, պարզապես նրա համար, որ նա խուսափում է փաշային յուրայինների ազդեցությունից, հասկացրի որ ինչքան և ցանկալի լինի դրսի օժանդակությունը և հրամայական նրա պահանջը, մենք չենք կարող հրաժարվել այնքան թանգ գնով ձեռք բերած մեր անկախությունից: Ի վերջո միջին ճամբա գտանք:

Կիլիկիա. – Սկզբից ևեթ Կիլիկիայի խնդիրը մեզ համար փորձաքար եղավ: Դուք գիտեք, որ մեր կառավարության և իմ սկզբնական ցանտությունն էր հրաժարվել Կիլիկիայից: Գիտեք, թե ես այստեղ հասնելով խնդրեցի մեր կառավարության փոխել իր առաջին որոշումը և պահանջել նաև Կիլիկիան: Կա երկու պատճառներ, 1) թուրքահայերի և իրենց ներկայացուցիչների միահամուռ պահանջը և 2) Ամերիկայի մանդատի կարելիությունը և մասնավորապես մեծամասնության վճռական ցանկությունը: Տարաբախտաբար մեր ենթադրությունները չարդարացան և Կիլիկիան մեզ համար նույնիսկ աղետաբեր դարձավ: Անկասկած առաջին պատասխանատուն այս ծանր վիճակին Ամերիկան է՝ այս երկրում անցած դարցածը և Սենատի բռնած ընթացքը անակնկալ եղավ ոչ միայն մեզ համար, այլև դաշնակիցների ամենահեռատես քաղաքական վարիչների համար: Ամերիկայից դուրս կան և ուրիշ պատասխանատուներ, որոնց մասին այժմ գրելու հնար չունենմ:

Ամերիկայի հրաժարումով Ֆրանսիան, որ ակնդեր սպասում էր այդ օրին, Կիլիկիա մտավ ոչ որպես մեզ բարեկամ... Ամերիկայից զրկվելուց հետո ապարդյուն է ֆրանսիացիներից պահանջել Կիլիկիայի հայոց ինքնավարությունը, որ իբր թե խոստացված է Պողոս փաշային, վերջինս դրա հակառակ շարունակեց պնդել դրա վրա... [Շ.Ժորժ-]Պիկոն¹⁶ Կիլիկիայի նախկին կոմիսարը Մուստաֆա //-114 Քենալի մոտ գնաց... համաձայնության գալու... Մ.Տամատյանը¹⁷ գրում է, թե ֆրանսիական իշխանությունները հայտարարեցին ընդհանուր զինաթափումն ժողովրդի, բայց հետո առան միայն հայերի զենքերը, ասելով, թե թուրքերը չեն տալիս: Վտանգ այլևս իրականա՞ծ պահուն իսկ, երբ հայ գլխավորները զենք են խնդրել ֆրանսիական իշխանություններից, մերժում են ստացել: Մարաշն էլ թողել են գիշերով առանց զգուշացնելու թշվար ազգաբնակչությանը...

Ֆրանսիական մամուլը վրդովեցուցիչ լռություն պահեց և շարունակում է պահել՝ ամբողջ Անգլիան դրդոց իր մամուլի հուզումով: Հուզումն այնքան մեծ եղավ, որ պառլամենտը շտապեց [ստումներ] նշանակել ու պահանջել բացատրություն կառավարությունից¹⁸: Այդ նիստին ներկայացանք և մենք, հայ ներկայացուցիչներս: Դ.Լլոյդ Ջորջի բացա-

տրությունները¹⁹ չգոհացրին պառլամենտին և մեր բարեկամ լորդ Ռոբերտ Սեսիլ իր ամենեն ազդեցիկ ճառերեն մինը արտասանեց Յանայնքների պալատում²⁰ և մեր մյուս բարեկամ լորդ Ջեյմս Բրայս Լորդերի պալատում²¹, որով պահանջում էին ավելի հստակ, ավելի վճռական հայտարարություն կառավարությունից: Հասարակած կարծիքի և ժողովրդի ներկայացուցիչների ճնշման տակ բրիտանական կառավարությունը ստիպված եղավ (չեմ ասի թե այդ ստիպմունքը անհաջող էր) Կ.Պոլսի հարցը նորից Խաղաղության] համագումարի սեղանի վրա դնել: Միահանուռ պահանջն էր երկրի, հոգուտ թուրքերի տրված որոշումը Կ.Պոլսի մասին չեղյալ նկատել և Թուրքիային ներկայացնելիք պայմանները ավելի ևս խորացնել: Կառավարությունը առանց հայտնելու իր ծրագիրը՝ խոստացավ երկրի ձայնին հետևել:

Մենք ևս մեր կողմից - փաշան, ես և պատրիարքը ազդու բողոք ներկայացրինք և Խաղաղության] համագումարին, և անգլիական ու ֆրանսիական կառավարություններին: Ա.Միլլերան մեզ տեսակցություն նշանակեց և գրեթե նույն ժամին, ստիպված եղավ մեկնել Լոնդոնից, Փարիզում սկսված խոշոր գործադուլի պատճառով: Մեզ ընդունեց Լոնդոնի ֆրանսիական դեսպան Պոլ Կամբոն, որին և ներկայացրինք մեր բողոքը: Հաջորդ օրն իսկ Ա.Միլլերան Փարիզից հեռագրով պատասխանեց մեզ, թե բոլոր դիվանագիտական ու ռազմական միջոցները ձեռք են առնվում վերջ դնելու համար Կիլիկիայի թշվառության (այս խնդիրների և պատասխանների պատճենները ուղարկում են ներփակ): Միաժամանակ Խաղաղության] համագումարի շրջաններից մեզ հավաստիացրին, թե թուրքերի դեմ վճռական ու խիստ միջոցների [են] դիմելու, մասնավորապես Կ.Պոլսում և հավանաբար գավառներում: Պատրիարքին առանձին ուշադրության առարկա դարձրին Լոնդոնի բարձր պաշտոնական շրջանները: Քենտերբերիի արքեպիսկոպոսը մեզ բոլորիս թեյի հրավիրեց²² և իր աջակցությամբ ու ընկերակցությամբ հայոց պատրիարքը ունկնդրության ընդունվեցավ թագավորի մոտ²³, որը շատ սիրալիկ կերպով հարց ու փորձ արեց նրան Կիլիկիայի անցուդարձի մասին՝ որ ըստ երևույթին լավատեղյակ էր: Բոլոր նշաններից երևում էր, որ Անգլիան առանձնապես շահագրգռված է Կիլիկիայի հարցով և կասկածից դուրս է, որ այս հետաքրքրությունն ու ուշադրությունը հայկական շահերից ավելի հեռու է գնում: Այս վերաբերմունքը շարունակվում է, և այստեղ ևս բացահայտ է անգլո-ֆրանսիական հակամարտությունը: Մեծ զգուշություն է պետք մեզ, և շատ հեռատեսություն, այս անօրինակ մրցման նոր զոհեր չտալու համար: Չգիտեմ, պիտի ունենաք այդ զգուշավորությունը այն ժամանակ, երբ իմ շրջապատում տակավին զգաստությունը պակասում է, և այս խնդրում ես շատ եմ մենակ: Ավելի ցավալին այն է, որ մեր գաղութներից և մասնավորապես Ամերիկայից հեռագրել են տեղում մեզ վրա, որոնք պահանջում են Հայաստան ծովից ծով: Թշվառությունն այն է, որ մեր Ամերիկայի եռանդուն բարեկամները, որոնք տակավին չկարողացան իրենց կառավարությունից մի հատիկ փամփուշտ շորթել մեզ համար, շարունակում են պահանջել Կիլիկիան, առանց հաշիվ առնելու քաղաքական այս ծանր կացությունը, որի մեջ թաքտում ենք անգութորեն:

Ստիպված եղա մեր ներկայացուցիչ պ.Գ.Փաստրնաճյանին²⁴ գրել և հեռագրել: Առայժմ որպես միակ դրական հետևանք Կիլիկիան սարսափների, դաշնակիցներն Անգլիայի պահանջումի և հակառակ Ֆրանսիայի դժկամության՝ գրավել //-115 են Կ.Պոլիսը, գրեթե անդամալուծել թուրքական կառավարությունը... Այստեղ փորձում են մեզ հավատացնել, թե Կ.Պոլսի գրավումը բավարար երաշխիք է հայերի ապահովության գավառներում, մանավանդ որ անգլիական գեներալ Ջ.Միլնը²⁵ հայտարարել է, որ եթե այնուհետև հայերի ջարդ լինի, թուրքիան կգրկվի Կ.Պոլսից: Ես անձամբ հեռու եմ այն կարծիքից, թե Կ.Պոլսի գրավումը բավարար երաշխիք է մեր խեղճ ժողովրդի ապահովության. Ես հավատացած եմ, որ մինչև Մ.Քենալը և իր բանդաները հարված չստանան գավառներում, մինչև որ Ադրբեջանը չնկատվի թուրքիային դաշնակից և գործակից, և դրան համապատասխան հատուցումն չունենա, մենք չենք կարող հանգիստ ունենալ ոչ մեր հանրապետության սահմաններում, ոչ մեր թուրքահայ գավառներում, և ոչ էլ Կիլիկիայում: Այս է, որ մենք այժմ աշխատում ենք հասկացնել մեր անգլիացի բարեկամներին, եթե դեռ չեն հասկացել: Մասնավորապես Ադրբեջանի վերաբերմամբ այստեղ մի կուրություն է իշխում, որ հուսահատական լինելու չափ վտանգավոր է: Գեներալ Տոմսոնների²⁶ և դրանց նմանների քաղաքականությունն այստեղ մեզ համար շատ կորուստաբեր մթնոլորտ է ստեղծել, և մամուլ ու հասարակություն, կառավարությունն ու զինվորական իշխանությունն շարունակում են Ադրբեջանի և թուրքերի մեջ տարբերություն տեսնել և Բաքվի կառավարությունը նկատել որպես վստահելի իրենց ուշադրության, թեև չեն ասի բացարձակ հավատի: Այստեղ էլ մենք ահագին գործ ունենք կատարելու, այդ սխալ, այդ վատ համոզումը թուլացնելու համար:

Տարաբախտաբար այս աշխատանքի մեջ մենք մեր դեմ ունենք Կովկասի անգլիական ներկայացուցիչ Ջ.Ուորդոպը²⁷ և առհասարակ իր զինվորական գործակիցները: Ես սկզբից վստահություն չեմ տածել դեպի Ջ.Ուորդոպը և դժբախտաբար իմ նախատեսությունը կատարվեց: Այսօր Ջ.Ուորդոպի զեկույցի հիման վրա զարհուրելի մեղադրանքներ է հրատարակվել մեր դեմ, իբր թե մեր հանրապետության սահմաններում մենք հարյուրավոր թաթարական գյուղեր ենք ջարդել ու ավերել և հարյուր հազարավոր թաթարներ մեր սահմաններից փախել են Ադրբեջան: Կարծում եմ, որ մի քանի օր առաջ լորդ Ջ.Քերզոնի ասածը Լորդերի պալատում²⁸, թե հայերը վայրագ ու արյունոտ հարձակումներ են արել թաթարների վրա, նույն Ջ.Ուորդոպի տեղեկագրերից և զեկույցներից է: Նախարարի և ...* հայտարարությունը սարսափելի տպավորություն թողեց այստեղ և ես ու Պողոս փաշան շշմեցինք. Խորեն արքեպիսկոպոսը²⁹, որ այժմ Լոնդոն հասավ հերքում է այդ մեզ վերագրած բարբարոսությունները, դուք ոչինչ չեք գրում: Ես հեռագրեցի Ձեզ, ի սեր Աստծո, շտապով բացատրություն գրեցեք, սա աներևակայելի է, մեր դատի այս եռուն շրջանում, այսպիսի ծանր մեղադրանքներ կարող են շատ ողբալի կերպով անդրադառնալ մեր շահերի ու մեր սահմանային խնդիրների

* Մյուս անձի ով լինելը բացահայտված չէ:

վրա: Ինչպե՞ս է Ձեր հարաբերությունը Վ.Յասկելի³⁰ հետ, ինչու՞ են նրանք այսքան ծանր մեղադրանքներ թափում մեր գլխին, ու՞ր էր բացատրությունն այս բոլորի, ինչու նրանք չեն հեռագրում Արեշի, Նախիջևանի, Գողթանի, Ղարաբաղի հայության կոտորածները: Շատ են խնդրում անհոգության չտալ այս հարցը և շտապով ինձ տեղեկություն հասցնել: Ես չեմ կարող վարկյան իսկ հավատալ, թե մեր ժողովուրդն ու զորքը ընդունակ է այս կարգի զուտ թաթարական բարբարոսության...

Մեր հավանական սահմանները. – Խաղաղության համագումարը դեռ շարունակվում է. տակավին մեզ պաշտոնապես չհայտնեցին, թե որո՞նք են մեր վերջնական սահմանները: Սակայն հաստատապես կարող են ասել, որ մեզ թուրքերից բաժանող սահմանագիծը վերջնականապես որոշված է: Մեզ հայտնեցին, որ ստիպված են այդ առայժմ գաղտնի պահել, նկատի առնելով Թուրքիայում ստեղծված բարդ դրությունը և այնտեղ իշխող մեզ համար վտանգավոր կացությունը: Սակայն ի վիճակի են Ձեզ հաղորդել, որ մենք կունենանք արևմուտքից. 1) Էրզրում, Մամախաթուն, բայց տարաբախտաբար առանց Երզնկայի 2) Քղի, Բալու, առանց Քենախի, Դերսիմի ու Խարբերդի, և 3) այնուհետև մեր սահմանն անցնե՜//-116 լու է Բիթլիսի-Վանա լճի հարավից դեպի արևելք՝ պարսկական սահմանին միանալու համար Յայկական Տավրոսով, դուրս թողնելով Դիարբեքիրը և ինչ որ ավելի ծավալին է նաև*, որ ֆրանսիացիք չկամեցան ձեռքից բաց թողնել, համարելով Կիլիկիայի մաս, ինչ որ անվանում են այժմ բարձր Կիլիկիա, կամ ակելի ճիշտ վերին Կիլիկիա: 4) Մենք կունենանք ազատ ելք դեպի Սև ծովը՝ Ռիզե և Աթնա ծոցերով և գրեթե ամբողջ Լազիստանը, պայմանով, որ լազերին տանք ներքին ինքնավարություն գլխացավանք չունենալու համար: Այս են մոտավորապես մեր սահմանները, որ կարծում ենք, կարելի է վերջնական նկատել, եթե թուրքական պատկիրակությունը չհաջողեցնի այս նոր փոփոխության ենթարկել տալ, ինչ որ մենք համարում ենք ոչ հնարավոր: Ավելացնեմ սրա վրա, որ հավանաբար մենք կունենանք տնտեսական ելք Տրապիզոնից և մեզ հավատացնում են նաև Բաթումից: Մասնավորապես, վերջինը մենք պնդում ենք, և մեզ ամենքն էլ իրավունք են տալիս: Շատ են խնդրում առայժմ այս բոլորը պահել անպայման գաղտնիք:

Մեր սահմանները Կովկասում. – Գալով մեր սահմանների Վրաստանի և Ադրբեջանի հետ, մեզ հայտնեցին, որ Խաղ[աղության] համագումարը գերադասում է առայժմ այդ խնդրով չզբաղվել և թողնել, որ երեք պետությունները իրենք իրենց մեջ բարեկամորեն իրավախոհության գան, եթե այդ չհաջողվի, այն ժամանակ կմիջամտեն ու կլուծեն: Սա մի որոշում է, մեզ դժգոհ ձգելու, բոլոր կողմերն առնի: Իմ խորին համոզմունով դուք այդտեղ ոչ միայն երբեք համաձայնության չէք հասնի Ադրբեջանի հետ, այլ տարաբախտաբար... վրացիների հետ, որին կապված է նաև մեր տրանզիտի իրավունքը... Եթե մենք հակառակ մեր լսած հայտարարության, պաշտոնապես դիմենք Խաղ[աղության] համագումարին, խնդրելով լուծել մեր սահմանավեճերը Կովկասում, տիրաբար արդյո՞ք չի

* Տեղանունը բացակայում է:

Ուկրաինայի այդ որպես մեր կողմից խախտումն կայացած համաձայնության և չի անդրադարձնա տրանզիտի մեր իրավունքի վրա, որ կարող է կորստաբեր լինել մեզ համար: Սպասում էի, որ Խորեն եպիսկոպոսի հետ դուրս այս մասին որևէ լուսաբանություն կորկեք, բայց Խորեն եպիսկոպոսը բերանացի միայն ինձ ասած թե Ս.Մամիկոնյան³¹ Ա.Խատիսյան իրեն հայտնել են Թիֆլիսում, թե սպասում են մեզնից մեր սահմանների խնդրի կարգադրումը: Սա խիստ ցավալի է. այսպիսի հարցերը, ուր ահագին պատասխանատվություն կա՝ բերանից բերան անցնելով հրահանգով ու խորհրդով չեն լուծվում: Մյուս կողմից ժամանակ ու հնար իսկ չկա անմիջապես Ձեզնից հրահանգ ստանալ: Փաշայի ու Օհաննես Խան Մասեհյանի հետ խորհելով եկանք այն եզրակացության, որ... պետք է վերջ դնել... այս մշտական պատերազմական վիճակին, և ես վճռեցի էլի մի անգամ սարսափելի պատասխանատվություն հանձն առնել ձեր առջև, մեր պառլամենտի առջև և մեր սահմանավեճերի խնդիրը հանել Խաղաղության] համագումարի առաջ...

Որոշեցինք... խնդրել Խաղաղության] համագումարին նշանակել արբիտրաժ կատարող երեք հոգուց բաղկացած մի հանձնաժողով, որի մի անդամը կանվանեն հայերը, մեկը վրացիք և երրորդ նախագահ կանվանի Ազգերի լիգայի Խորհուրդը: Մենք այն կարծիքի ենք, որ մի այսպիսի դիմումն մեր կողմից կարող է շատ լավ տպավորություն թողնել Խաղաղության] համագումարի վրա որպես մեր հաշտարար ոգու արտահայտություն... Այս որոշումը մենք կայացրինք այսօր մարտի 19-ին, ու տակավին չենք իրագործել: Խորապես ցավում են, որ ոչ մի հնարավորություն չկա ձեզնից այս մասին հրահանգ ստանալ: Յետևապես, եթե վաղը մյուս օրը մեր հավանելիք տեղեկություններն ու կարծիքներն չգան, ...դիմումն կարվի հիշյալ մտքով Խաղաղության] համագումարին: Այնուամենայնիվ ձեզ խնդրում են այս զեկույցն ստանալուն պես հունական կամ իտալական միսսիաների միջոցով անմիջապես ինձ հեռագրել, ...այս հեռագիրն ինձ անհրաժեշտ է խիղճս հանգրստացնելու համար:

Հայաստանի մանդատը. – Վերևում հիշեցի արդեն, որ Խաղաղության] համագումարը մեր մանդատն առաջարկել է Ազգերի լիգային³²... Մեզ համար պարզ-/-117 վեց այն տեղեկությունների բնույթը, որ Ազգերի լիգան պահանջել էր³³ իր պատասխանը տալուց առաջ: Դրանք երեք տեսակ են 1) ֆինանսական, 2) զինվորական, և 3) վարչական: Ուրիշ խոսքով՝ ուզում են մեզնից իմանալ, թե որքա՞ն դրամի պետք ունենք և ի՞նչ չափով զինվորական ու քաղաքացիական խորհրդականներ ենք ուզում մեր բանակն ու վարչությունը կազմակերպելու: Պարզվեցավ, որ Ազգերի լիգայի Խորհուրդը, որի նախագահն է ֆրանսիական սենատի նոր նախագահ Լեոն Բուրժուա, մտահոգության մեջ է, քանի որ ինքն իրեն այդպիսիք՝ տակավին չունի իր տրամադրության տակ հիշյալ միջոցներից ոչ մեկը՝ ոչ դրամ, ոչ զորք և ոչ վարչական աշխատանքների համար պատրաստ անձնավորություններ: Իմացանք, որ մտադրություն կա ֆինանսներն ապահովել դաշնակիցների միջոցներով, իսկ զինվո-

* Նկատի ունի վերոնշյալ տվյալները:

րական ու քաղաքացիական խորհրդականներ խնդրել Ամերիկայից: Ամերիկային լինելիք առաջարկը, եթե մերժվի վերջիններիս կողմից, ապա նույնը պիտի առաջարկվի Շվեդիային կամ սրա նման մի պետության:

Մենք, ... համաձայն մեզ տված հարցերի պատրաստեցինք մի գրություն, ուր մշակեցինք (թեև բավական հապճեպ...) մեզ անհրաժեշտ ֆինանսական, զինվորական ու քաղաքացիական պետքերը և այն պայմանները ընդհանուր գծերով, որով պիտի սահմանեն մեր կառավարության, պառլամենտի և Ազգերի լիգայի փոխհարաբերությունները³⁴... Մենք զգուշության համար աշխատեցինք մնալ ընդհանուր սահմաններում... թողնելով ապագային մշակելու մանրամասները: Ես իմ կողմից՝ հակառակ Պոդոս փաշայի և ուրիշների, սեղմել եմ այդ պայմանները մինչև մինիմում՝ մեր անկախությունը անաղարտ պահելու և օտար, խորթ, հաճախ ձախող միջամտություններին դուռ չթողնելու համար... Խնդրում եմ հավատալ, որ ես գերագույն ճիգ եմ արել այս... ծանր մթնոլորտում (չափազանց պահանջողական ու չափազանց հեռու մեր իրականությունից), որի մեջ ահա մի տարուց ավելի է, ինչ վիճակվեց ամենադաժան, ամենասպանիչ աշխատակցություն: Համենայն դեպս ուրախ ու հպարտ եմ ասել, որ մինչև այս ժամը մեր նվիրական անկախությունից ոչինչ չեմ թույլ տվել զոհել և այս ծրագրի մեջ իսկ կտեսնեք, մեր պառլամենտին է մնում վերջին վճռական խոսքը: Սա, ըստ իս, մեր մեծագույն պատվարն է ընդդեմ որևէ ոտնձգության: Այս առթիվ ես խնդրում եմ երկրորդ հեռագիր տալ ինձ հետևյալ բովանդակությամբ, թե բաժանում եք կարծիքըս...

Հ.Գ. Ստանալով Թիֆլիսի մեր ներկայացուցչությունից հերքումն այն լուրի, որ վերագրում էր մեզ ագրեսիվ ընթացք ընդդեմ թաթարների³⁵, ես այս հերքումը փոխանակ թերթերին տալու, չհրահրելու համար մոռացված փաստը - բարվոք համարեցի դրկել բրիտանական արտաքին գործոց նախարարության: Ցավում եմ, որ լորդ [Ջ.]Քերզոնը իմ այս նամակին պատասխանեց նոր մեղադրանքներով, որոնք խիստ ծանրակշիռ են անուշադիր մնալու համար: Ներփակ դրկում [եմ] լորդ [Ջ.]Քերզոնի այդ նամակը, հեռագրել եմ Ձեզ այս նասին և ստասում եմ Ձեր պատասխանին: Ա.Ահարոնյան»:

ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.290, թ.68-85: Բնագիր: Մեքենագիր, ձեռագիր լրացումներով:

№ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա.
ԱՐԱՐՈՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ
Ա. ԽԱՏԻՍՅԱՆԻՆ՝ ԼՈՆԴՈՆԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ ՀԱՅՎԱԿԱՆ
ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

23 մարտի 1920թ., Լոնդոն

Սիրելի Ալեքսանդր Իվանիչ

Խորեն սրբազանը հասավ. շատ բան պարզեց և տվեց թղթերը և քո նամակը: Պաշտոնապես քեզ գրում եմ արդեն ընդարձակ զեկույց... Սրանով գալիս եմ պա--/118 տասխանելու քո շատ հեռագիրներին և նամակի մի քանի կետերին...

1) Այնուհետև երկու պատվիրակությունների ձուլելու հարցը պետք է համարել միանգամայն ավելորդ և նույնիսկ վնասակար: Ավելորդ, որովհետև ժամանակն անցած է, մեր խնդիրը կարելի է համարել լուծված: Վնասակար, որովհետև պատվիրակությունները այսուհետև զբաղված են լինելու մեր երկրի ներքին կազմակերպչական և մանդատների հետ ունենալիք հարաբերությունները սահմանող խնդիրներով: Այս պարագաներում լավագույն վիճակն այն է, երբ ես ներկայացնում եմ մեր իրավական պետությունը և այս խնդիրները լուծելիս գերակշռող ձայն ունեն չթույլ տալու համար, որ մեր այնքան թանգ գնով ձեռք բերված ազգային անկախությունը կաշկանդվի օտար կապանքներով շատ երկար ժամանակով: Պողոս փաշայի և յուրայինների ձգտումը իմից և իմ շրջապատից բոլորովին տարբեր է: Նրանք... չեն կարողանում ազատվել օտարին ամբողջապես ապավինելու անճարակ ձգտումներից... Վերստին խնդրում եմ քո և բոլոր ընկերների վստահությունը, իմ անձնական պատասխանատվությամբ: Հնար տվեք ինձ վերջացնել սկսածս գործը...

2) Գաղթականների վերադարձի մասին անհնարին է անմիջապես քայլեր անել, երբ դեռ ծեծվում են թուրքաց Հայաստանի գրավելու միջոցները: Կարծում եմ, աշխատելով իրագործել այդ գրավումը, մենք անուղղակի կերպով լուծում ենք գաղթականների վերադարձի խնդիրը: Կիլիկիայի վերջին աղետը ապացուցեց, թե որչափ զգույշ պիտի լինել մեր ժողովուրդը տեղից շարժել, քանի երկրում չեն ստեղծված լիակատար ապահովության պայմաններ:

3) Ձենքի և ռազմամթերքի խնդիրը... Այսօր բրիտանական արտաքին գործոց նախարարությունը առաջին անգամ հղեց պաշտոնական գրությունը, որով մեզ հաղորդում են, թե բրիտանական կառավարությունը վճռեց մեզ տալ զենք և ռազմամթերք:

Ներփակ մեր վերջին դիմումի և արևտաքին գործոց նախարարի պատասխանի պատճենները:

4) Ինչ վերաբերում է մեր ժողովուրդի պարենավորման, այդ ուղղությամբ իմ և Հանոյի³⁶ կատարած ջանքերը Ձեզ հայտնի են... Հանոզվել պետք է, որ առանց կրեդիտի անհնարին է ավելին անել...

Դրամանիշները մենք, այսինքն պատվիրակությունը, տպագրել տվեց և շարունակում է մնացածը տպագրել... Այս խեղճ պատվիրակությունը անկարելին է արել և պիտի անի այսուհետև էլ - մեր ժողովուրդին պարեն հասցնելու: Մեղքը մերը չէ, արդյունք քիչ է, կրեդիտ չունենք:

5) Թուրքերի կողմից մեր սահմանների հարցը կարելի է լուծված համարել... Շուտով, հուսամ, պիտի կարողանամ այս մասին Ձեզ նաև պաշտոնապես հաղորդել: Առայժմ ծածուկ են պանում թուրքերի վզին դրվելիք պայմանները, մինչև իրագործելու պայմանները ապահովվեն...

6) Մեր կովկասյան սահմանների մասին գրել եմ պաշտոնական իմ գեկույցում... Խոսեցի այստեղ և Ա.Թոփչիբաշևի³⁷ և Ն.Չխեիձեի³⁸ հետ և երկուսով էլ խույս են տալիս կտրական պատասխանից և ըստ երևույթին չէին կամենա այդ կարևոր հարցը այստեղ փոխադրել, քանի որ կարողանում են Ձեզ այդտեղ խեղդել... Մենք միջոցներ պիտի փնտրինք այս հարցը արագ լուծելու: Համենայն դեպս, Ձեզ հայտնում եմ, որ ես մտա-

դիր չեն հրաժարվել ոչ Ղարաբաղից³⁹, ոչ Ջանգեզուրից և ոչ Նախիջևանից: Ինչպես Կովկասում, նույնպես և այստեղ ես հաստատ եմ այդ հարցում: Եթե դուք տարբեր կարծիք ունիք, ինչ որ ինձ անասելի ցավ կպատճառի, ինձ միայն պիտի բռնադատեք, որ համաձայնվիմ: Ինձ համար մահացու է ստորագրել մի ակտ, որ մեզնից պիտի խլի Ղարաբաղ, Ջանգեզուր ու Նախիջևան կամ նույնիսկ դրանցից մեկը: Ես մնում եմ այս խորին համոզման, որ այս երեք գավառներից որն էլ խլեն մեզնից՝ մեր պետության ապագան կվտանգվի:

7) Կիլիկիայի մասին Ձեզ գրել եմ պաշտոնական զեկույցով: Լիապես բաժանում եմ նամակումդ գրած ձեր կարծիքը: Կվարվիմ ըստ այնմ... Այսօր լորդ Ջեյմս Բրայսն ինձ հավատացնում էր, որ հանգամանքները հիմնավորապես փոխված // -119 են, որ Ֆրանսիան հրաժարվում է Կիլիկիայից, բավականանալով միմիայն տնտեսական առավելություններով: Նա կարծում է, որ հնարավոր է Ֆրանսիային տալ իր ուզածը, իսկ Կիլիկիան կառավարել ուրիշ պետության ձեռքով: Ես շատ լավ գիտեմ թե ուր է գնում այս բոլորը...

Ավելացնեմ քանի մի խոսք մեր ընդհանուր խորհրդակցություններից. ըստ երևույթին Ֆրանսիան մեր դեմ է թուրքիայում, ուզում է դրա հակառակ մեր հետ լինել Կովկասում Ղարաբաղի և հարակից խնդիրներում: Այսօր այս էր նկատվում առանձնապես Պ.-Օ.Շարդինյի խոսքերից... Դեռ էլի տասն օր կմնանք Լոնդոն, այնուհետև Խաղ[աղության] համագումարը կանցնի Փարիզ, ապա Սան Ռեմո: Թուրքերին այս մարտի 22-ին ասացին, թե հետաձգել են մինչև ապրիլի 15-ը⁴⁰: Հետևապես մեր խնդրի պաշտոնական ձևակերպումն ու հայտարարությունը շատ մոտ է: Ասեցի, որ պատվիրակությունների ներկա դրությունը չպետք է փոփոխությունների ենթարկել. բայց նորից պիտի խնդրեմ շտապով կազմել կոալիցիոն նախարարություն և ինձ հեռագրել շուտով: Ավելի հենվեցեք տեղիդ թրքահայերի վրա և մեր չափավոր ու ոչ պոլիտիկա տարրերի վրա: Պառլամենտի անդամների թիվը 51-ով ավելացնելու ծրագիրը շատ էլ հավանալի չէ: Դա շատ կմեծացնի մեր ծախսը Երևանում: Տարբեր միջոց գտնվելու է սիրաշահելու համար թուրքահայերին:

Երկու օր առաջ Times հրատարակեց թուրք-ադրբեջանյան հարձակողական ու պաշտպանողական դաշնագիրը⁴¹: Անգլիան հավատում է այդ փաստաթղթերի գոյությանը, որի պատճենը կա և իմ ձեռքում: Հանդորդեցեք ինձ Ձեր ունեցած բոլոր այն փաստական տեղեկությունները, որոնք գալիս են ապացուցանելու նրա գոյությունը: Հատկապես ադրբեջանյան զիֆվորությունը թուրքական զինվորականների ղեկավարությունն ու գործունեությունը և այլն...

Պողոս փաշայի և իմ հարաբերությունները... շարունակում են լինել կորրեկտ... Ամենքի համար պարզ է, որ մեր երկրի մեկ մասի կազմակերպված պետությունը իր ներկայացուցչությունը պիտի ունենա և մյուս մասը յուրը: Երբ պաշտոնապես հայտարարվի մեր երկրի երկու հատվածները միացած, արդեն երկու պատվիրակությունների ֆունկցիան բնական ճամբով կդադարի և կմնա կառավարությունը, որը պետք է այդ ժամին կոալիցիոն լինի: Եվ այդ պաշտոնական հայտարարությունը մոտ

է, շատ մոտ:

Պ.Օհաննես խան Մասեհյանը այս փոստով գրում է քաղաքական անցուդարձի մասին իր խորհրդակցությունները, ...որ խնդրում են լուրջ ուշադրության առնել...

Հ.Գ. Շատ ցավեցի, որ այնպիսի կարևոր մարդ, որպիսին Խորեն սրբազանն է, այս կրիտիկ պահուն թողել էք, որ վերկենա Ամերիկա գնա, ըստ իս միանգամայն անպտուղ և ավելորդ միսսիայով...

Առայժմ այսքան: Ձերն բարևներով

Քո Ա.Ահարոնյան

ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 87-93: Բնագիր: Մեքենագիր, ձեռագիր լրացումներով:

Ծանոթագրություններ

1. Տիգրան Չալյան - Լոնդոնի կոնֆերանսում հայկական պատվիրակության անդամ, 1920թ. փետրվարի 25-ին, Պոլոս Նուբարի և Կ.Պոլսի հայոց պատրիարք Ջավենի հետ միասին մասնակցել է Ջ.Բրայսի հետ հանդիպմանը:

2. Ֆերդինանդ Թախթաջյան - Կ.Պոլսում ՀՀ դեսպանորդ: Ա.Ահարոնյանը նրա ազգանունը գրել է արևմտահայ` Թախթաճյան, ձևով:

3. Գաբրիել Ղորղանյան - գեներալ-մայոր, ՀՀ պատվիրակության ռազմական խորհրդական:

4. Հովհաննես խան Մասեհյան - Հայ ազգային պատվիրակության անդամ, այնուհետև ՀՀ դեսպանորդ Անգլիայում: 1912թ. եղել է Պարսկաստանի դեսպան Գերմանիայում:

5. Սիմոն Հակոբյան - Հայ ազգային պատվիրակության գլխավոր քարտուղար: //-120

6. Մարտիրոս Աճեմյան - ՀՀ պատվիրակության տնտեսական բաժանմունքի անդամ, իրավական խորհրդական, նախկինում Ռուսաստանի Պետդումայի պատգամավոր:

7. Արտավազդ Խանենյան - Հայ ազգային պատվիրակության կից Փարիզում գործող Հայկական տեղեկության և մամուլի գրասենյակի ղեկավար: Գրասենյակի 21.02.1920-ի հաղորդակցությունը տես, որպես օրինակ, ՀԱԱ ֆ.200, ց.1, գ.546, թ.12-ում: 1920թ. սետպեմբերից Ա.Խանենյանը ՀՀ պատվիրակության գլխավոր քարտուղար է: Վավերագրում նրա ազգանունը գրվել է որպես Խանունյանց:

8. Փարիզի վեհաժողովի Գերագույն խորհուրդ:

9. Ջեյմս Բրայս - հայասեր, բրիտանական Պառլամենտի լորդերի պալատի անդամ:

10. Ռոբերտ Էդգար Ալջեռնոն Գասքոյն-Սեսիլ, դերկոմս Չելվուդ - հայասեր, բրիտանական Պառլամենտի համայնքների պալատի անդամ: 1920թ. մարտի 4-ի, 8-ի, 11-ի և 15-ի հարցումներով պնդել է հայերի պաշտպանության անհրաժեշտությունը: Տես. The Parliamentary Debates, Official Report, House of Commons, 5th series, vol.126, 1-19.03.1920, col.634, 892, 1511, 1810 (այնուհետև` Hansard): Տես նաև. «Times», Lnd., 12.03.1920, p.19; թերթը պահվում է ՀԱԱ ֆ.200, ց.1, գ.427, թ.104-ում:

11. 1920թ. մարտի 16-ին բրիտանական զորքը գրավել է Կ.Պոլիսը: Հնարավոր դիմադրությունը նվազեցնելու համար, դեռևս փետրվարի 17-ին կատարելով Ջ.Քերզոնի հրամանը, Բրիտանիայի Գերագույն հանձնակատար Ջ.դը Ռոբեկը տեղեկացրեց օսմանյան կառավարությունը, որ այդ քաղաքը որոշվել է թողնել Թուրքիայի նոր սահմաններում:

12. 1919թ. փետրվարի 3-4-ին Հունաստանի վարչապետը հայտարարել է Փարիզի վեհաժողովում, որ թեև Տրապիզոնի նահանգի հույները հարուցել են այդ վայրում ինքնուրույն Պոնտոսի պետություն ստեղծելու հարցը, ինքը պաշտպանում է նահանգը Հայաստանի սահմաններում ներառնելու առաջարկը:

13. Էլեֆթերիոս Կիրիակու Վենիզելուս - Հունաստանի վարչապետ:

14. Նկատի ունի 1916թ. մայիսի 16-ի Սայքս-Պիկոյի համաձայնագիրը, որը Լոնդոնում են ստորագրել Անգլիայի արտգործնախարար Է.Գրեյն ու Ֆրանսիայի դեսպան Ժ.Կամբոնը:

15. Կենսակարգ:

16. Շառլ Մարի Ֆրանսուա Ժորժ-Պիկո - 1916թ. Սայքս-Պիկոյի համաձայնագրի համահեղինակ, 1920թ. Ֆրանսիայի Գերագույն հանձնակատար Սիրիայում ու Հայաստանում, նստավայրը՝ Բեյրութ:

17. Միհրան Տամատյան - Հայ ազգային պատվիակության անդամ, 1920 թ. օգոստոսի 4-ին, լինելով Ադանայում գործող Ազգային խորհրդի նախագահ Կիլիկիան հռչակել է անկախ հանրապետություն՝ Ֆրանսիայ հովանավորության ներքո:

18. Խոսքը 1920թ. փետրվարի 26-ի ծավալուն քննարկումների մասին է. Hansard, vol.125, col.1952-1958, 1984-1985, 1988, 1991-1992, 1994-1995, 1998, 2002, 2008, 2012, 2014, 2024-2025, 2029-2030, 2032-2035, 2039-2041, 2043, 2046, 2048, 2052-2054, 2061-2062:

19. Նույն տեղ, col.1960-1971:

20. Նույն տեղ, col.1971-1983:

21. Արտասանվել է 1920թ. մարտի 11-ին: Sten. The Parliamentary Debates, Official Report, House of Lords, 5th series, vol.39, 11.03.1920, col.394-409: Ջ.Բրայսի ելույթի մասին. «Times», 12.03.1920, p.10; պահվում է. ՀԱԱ ֆ.200, ց.1, գ.427, թ.104 դարձ; «Daily News», Lnd., 12.03.1920; գտնվում է թ.103-ում:

22. Փետրվարի 27-ին և մարտի 8-ին տեղի են ունեցել երկու հանդիպում ու մարտի 13-ին Քենտերբերիի արքեպիսկոպոսի կողմից կազմակերպված ընդունելություն. Ջալեն արքեպիսկոպոս Տեր Եղիայեան, Նշվ. աշխ., էջ 344-345:

23. 1920թ. մարտի 8-ին. Նույն տեղում, էջ 337-339, 345:

24. Գարեգին Փաստրմաճյան - ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ, 1920թ. ապրիլից՝ դեսպան Վաշինգտոնում: //-121

25. Ջորջ Ֆրենսիս Միլն - գեներալ-լեյտենանտ, բրիտանական Սև ծովյան բանակի հրամանատար՝ Կ.Պոլսում:

26. Վիլյամ Մոնտգոմերի Թոմսոն - գեներալ-մայոր, 1919թ. մարտի 10-ից մինչև մայիսի 12-ը բրիտանական 27-րդ դիվիզիայի հրամանատար՝ Թիֆլիսում: Կոչտ ճնշում էր գործադրում Ղարաբաղը Հայաստանում:

տանից խլելու համար:

27. Ջոն Օլիվեր Ուորդրոպ - Մեծ Բրիտանիայի գլխավոր հանձնակատարն Անդրկովկասում:

28. 1920թ. մարտի 11-12-ին. The Parliamentary Debates, Official Report, House of Lords, 5th series, vol.39, col.410-418: Արտատպվել է «Times», 12.03. 1920, p.10; պահվում է ՅԱԱ ֆ.200, ց.1, գ.427, ք.104 շրջ.; «Daily News», 12.03.1920; գտնվում է ք.103-ում:

29. Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյան - Երևանի թեմի առաջնորդ, 1920թ. դեկտեմբերի 11-ից արքեպիսկոպոս, 1932թ. նոյեմբերի 12-ից Խորեն Ա կաթողիկոսը: Նրա մասին՝ Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Բ, Խորեն Ա Մուրադբեկյան կաթողիկոս ամենայն հայոց (հոգևոր գործունեությունը 1901-1938թթ.), կազմ. Ս.Բեհբուդյան: Եր., 1996; ՅԱԱ ֆ.57, ց.2, գ.521, ք.141-142:

30. Վիլյամ Նեֆյու Չասկել - գնդապետ, դաշնակիցների Գերագույն հանձնակատար Հայաստանում:

31. Ստեփան Մամիկոնյան - 1917թ. Հայոց ազգային խորհրդի անդամ, ՀՀ լիազոր ներկայացուցիչ 1919-1920թթ. Թիֆլիսում անցկացրած դիվանագիտական բանակցություններում, այդ թվում՝ 1920թ. ապրիլի 9-14-ին տեղի ունեցած Անդրկովկասի երեք հանրապետությունների կոնֆերանսում:

32. Տեղի է ունեցել 1920թ. մարտի 12-ին. ՅԱԱ ֆ.430, ց.1, գ.1255, ք.1:

33. Ազգերի լիգայի քարտուղարության 1920թ. մարտի 17-ի գաղտնի պատասխանը (ՅԱԱ ֆ.430, ց.1, գ.1220, ք.3-4) Ա.Ահարոնյանը իմացել է երկու օրվա ընթացքում: Ազգերի լիգայի Խորհրդի պաշտոնական տապասխանը եղել է ապրիլի 11-ին:

34. 1920թ. մարտի 20-ի հուշագիրը կազմել են Մ.Աճեմյանն ու Օ. Խան Մասեհյանը, ստորագրել են Ա.Ահարոնյանն ու Պաղոս Նուբարը: Տես. ՅԱԱ ֆ.430, ց.1, գ.1218, ք.5-6; գ.1220, ք.7-10 պարունակում են մեկ այլ, էապես տարբերվող սևագրություն, որը կազմել են ամերիկյան մանդատարի համար: Այդ, 1920թ. մարտի 20-ին մշակված էջերը կրում են Մ.Աճեմյանի, Գ.Նորատունկյանի և Մ.Պապաջանյանի անունները:

35. 1920թ. մարտի 12-ին Ջ.Քերզոնն Ա.Ահարոնյանին է հանձնել հայերի հարձակումների մասին մի նամակ, ու պահանջել է զսպվածություն դրսևորել: Տես. Documents on British Foreign Policy, 1919-1939, ed. by E.L. Woodward, R.Butler, 1st Series, Lnd., HMSO, 1962, vol.12, p.574: Ամսի 15-ին Պողոս Նուբարը կոնֆերանսի նախագահ Դ.Լլոյդ Ջորջին է ուղղել այդ մեղադրանքը հերքող իր հուշագիրը. ՅԱԱ ֆ.430, ց.1, գ. 1047, ք.12: Մարտի 19-ին մեղադրական հոդված է լույս տեսել «Թայմս» թերթում. Tartars Complaints; պահպանվում է ՅԱԱ ֆ.200, ց.1, գ.427, ք.146:

36. Համազասպ Օհանջանյան - այն պահին՝ ՀՀ պատվիրակության տնտեսական բաժանմունքի նախագահ:

37. Ալի Մարդան Թոփչիբաշև - Ադրբեջանի պատվիրակության նախագահ Փարիզի հաշտության կոնֆերանսում:

38. Նիկոլայ Չխեիժե - Վրաստանի պատվիրակության նախագահ

Փարիզի վեհաժողովում:

39. 1920թ. մարտի 22-ին Ադրբեջանի գորքը լայնածավալ հարձակում է սկսել Ղարաբաղի և Ջանգեզուրի վրա, ամսի 23-ին Շուշիում սպանվել են 8 հազար հայ: Ամսի 26-ից Ջանգեզուրը հետ մղեց գրոհը, բայց Ղարաբաղը ազատվեց ավելի ուշ՝ ապրիլի 18-ին:

40. Կոնֆերանսը տեղի է ունեցել ապրիլի 18-26-ը:

41. «Թայմսի» 1920թ. մարտի 20-ի հոդվածը. «Թուրքական դավերը Կովկասում, Ադրբեջանը խճճված, Չամաթուրանական վտանգ»; պահպանվում է. ՀԱԱ ֆ.200, ց.1, գ.427, ք.147:

19 էջ

«Բանբեր Հայաստանի արխիվների»: Երևան, 2009, հ.2 (114), էջ 109-122: